



ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

**ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի
իրավախորհրդարվական ծառայության փորձագիտական-
վերլուծական բաժնի առաջատար մասնագետ,
ՀՀ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սասյիրանց**

**ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն աշխատանքի շրջանակային ծավալն իր մեջ ներառում է քրեադատավարական հարաբերություններում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման որոշ հիմնախնդիրներ: Այդ նկատառումից ելնելով՝ հիմնական շեշտադրումը կատարվում է այն հանգամանքների վրա, որոնք իրավակիրառ պրակտիկայում տարակարծության տեղիք են տալիս և միանշանակ չեն ընդունվում կամ իրական վտանգ են պարունակում անձի իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման արդյունավետության տեսանկյունից: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը սահմանում է.

«Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն ...»

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները»:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով» վերտառությամբ 426⁴-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

«3. Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի

հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարանի դիմած անձին հանձնելու օրվանից»:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի դրույթները թվարկում են այն սուբյեկտներին, որոնք նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն, որում, ի թիվս այլ սուբյեկտների, մատնանշված են նաև ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները: Իրավակիրառ պրակտիկայում նշված իրավակարգավորումը ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների համար հաճախ դիտվում և մեկնաբանվում է որպես հայեցողական իրավունք: Գտնում ենք, որ նման եզրահանգումների պատճառը «իրավունք» եզրույթի տարաընկալման և ոչ ամբողջական ըմբռնման մեջ է կայանում: Ոչ միայն քննարկվող նորմում, այլև, ընդհանրապես, օրենսդրության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի լիազորությունները մատնանշելու համար օգտագործվում է «իրավունք» եզրույթը, որը հաճախ մեկնաբանվում է որպես հայեցողական վարքագիծ դրսևորելու հնարավորություն, որից կարելի է օգտվել կամ չօգտվել: Այսպիսի իրավիճակը հետևանք է նաև այնպիսի հասկացությունների ոչ հստակ տարանջատման և ոչ լիարժեք ընկալման, ինչպիսիք են «իրավունք», «լիազորություն»: Ընդ որում, ոչ ամբողջական ընկալումն առկա է ինչպես տեսական մակարդակ



կում, այնպես էլ օրենսդրական իրավա- կարգավորումներում: Նշված հասկացու- քյունների իրավական չափորոշիչների նոր- մատիվ բովանդակության ապահովումը՝ որ- պես իրավական հասկացությունների միա- կերպ ըմբռնման, հետևաբար՝ հասարակա- կան հարաբերությունների արդյունավետ կարգավորման առաջնահերթ երաշխիք, են- թադրում է օրենսդրական հետագա զարգա- ցումների շրջանակներում հասնել նշված հարցի համակարգային լուծմանը:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2012թ. փետրվարի 24-ի ՄԳՈ-1009 որոշման մեջ ամրագրել է. ««Իրավական ակտերի մա- սին» ՀՀ օրենքի բազմաթիվ հոդվածների /մասնավորապես՝ 14-20/ իրավական տրա- մաբանությունից բխում է, որ **լիազորությունն իրավահարաբերության սուբյեկտին տրվող իրավունք ու պարտականություն է՝ օրենսդ- րությամբ նախատեսված իրավաչափ գործո- դություն կատարելու համար**»: ՀՀ Սահմա- նադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասը սպառիչ կերպով թվարկում է ՀՀ դատախա- զության լիազորությունները, իսկ 103-րդ հոդ- վածի 5-րդ մասը սահմանում է, որ դատախա- զությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված **լիազորությունների շր- ջանակում**՝ օրենքի հիման վրա: **Հետևաբար, փաստում ենք, որ դիտարկվող աշխատանքի մեջ քննարկվող խնդրի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4262- րդ հոդվածում «իրավունք» եզրույթը սեղա- վորվում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագր- ված «լիազորություն» հասկացության մեջ, և այն իրավակիրառ պրակտիկայում չպետք է մեկնաբանել և կիրառել «լիազորություն» հասկացության իրավական բովանդակու- քյան շրջանակներից տարբերվող կերպով:**

Խնդիրն անմիջականորեն կապակցված է նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատար- ման հարցի հետ: ՀՀ սահմանադրական դա- տարանն իր 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԳՈ- 758 որոշման մեջ դիրքորոշում է արտահայ- տել առ այն, որ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանու- քյան մասին եվրոպական կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է պայմանավորվող

կողմերի՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը: Ի կատա- րումն Եվրոպական դատարանի վճիռների՝ պայմանավորվող պետություններից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից, պահանջվում է, ի թիվս այլոց, ձեռնարկել ան- հատական բնույթի միջոցառումներ: Վեր- ջիններիս խնդիրն է վերացնել ժամանակի մեջ շարունակվող իրավախախտումը և այդ իրավախախտման հետևանքները՝ մինչև կոնվենցիոն իրավունքի խախտումը գոյու- քյուն ունեցած վիճակը հնարավորինս վերա- կանգնելու նպատակով (restitutio in integrum): Անհատական բնույթի միջոցառումները, որ- պես կանոն, ներառում են Եվրոպական դա- տարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը»: Այս հա- մատեքստում պետք է նշել, որ, ճիշտ է, ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված դեպքերում անձինք նույնպես իրավունք ունեն նոր հանգամանքով դատական ակտը վերա- նայելու բողոք ներկայացնել դատարան, սա- կայն խնդիրը կայանում է ավելի հիմնարար այնպիսի հարցի մեջ, թե արդյո՞ք իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար արժեքներին համահունչ է խախտված սահմանադրական և/կամ կոն- վենցիոն իրավունքների վերականգնման հարցը հիմնականում թողնել հենց խախտ- ված իրավունքի սուբյեկտի վրա: Չէ՞ որ որոշ- ակի հանգամանքներով պայմանավորված՝ գուցե անձը նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք չի ներկայացնում: Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած երկու ակտ՝ մեկը ներպետական դատական առյա- նի վերջնական դատական ակտը, իսկ մյուսը՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը կամ ՀՀ մասնակցությամբ գործող համապա- տասխան միջազգային դատարանի որոշումը /մասնավորապես, Մարդու իրավունքների եվ- րոպական դատարանի /այսուհետ՝ Եվրոպա- կան դատարան/ վճիռը/, և ՀՀ սահմանադրա- կան դատարանի կամ ՀՀ մասնակցությամբ գործող համապատասխան միջազգային դա- տարանի որոշմամբ հավաստվում է անձի սահմանադրական, կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը, սակայն նման խախտ-



ման հիմքում ընկած ներպետական դատական ակտը շարունակում է օրինական ուժի մեջ մնալ լոկ այն պատճառով, որ անձը հետամուտ չի եղել իր խախտված իրավունքների վերականգնմանը: Կարծում ենք, որ համապատասխան իրավակարգավորումներ պետք է սահմանվեն, որոնցով այն դեպքերում, երբ կհավաստվի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը, պետությունն իր վրա կվերցնի խախտված իրավունքների վերականգնման ողջ իրավական գործընթացը՝ ելնելով այն հիմնարար գաղափարից, որ անձի նկատմամբ կիրառված և նրա իրավունքները խախտած ակտը չի կարող շարունակել ուժի մեջ մնալ: Այստեղ հարկ է նշել նաև այն, որ վերոնշյալի համատեքստում արդարադատության նպատակը խախտված սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների վերականգնումն է, ինչը լիարժեք կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ կան բավարար և ամբողջական օրենսդրական կարգավորումներ և իրավական մեխանիզմներ, որոնց պարագայում պետությունն ինքը կստանձնի խախտված իրավունքների վերականգնման առաջնորդողի դերը:

Անհրաժեշտ է հավելել, որ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման անարդյունավետությունը: Սակայն, չնայած այդ հանգամանքին, գտնում ենք, որ այն դեռ շարունակում է մնալ անկատար, ուստի հարկ ենք համարում շեշտադրել նոր հանգամանքների հետ կապված այն դիրքորոշումները, որոնք ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իր որոշումներում: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում /ՄԳՈ-701, ՄԳՈ-751, ՄԳՈ-758, ՄԳՈ-767, ՄԳՈ-833, ՄԳՈ-866, ՄԳՈ-871, ՄԳՈ-935, ՄԳՈ-943, ՄԳՈ-984, ՄԳՈ-1099, ՄԳՈ-1114/ արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու

կենսունակության չափանիշների, այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ: Վերոհիշյալ որոշումներում, և, մասնավորապես, 2013թ. մայիսի 31-ի ՄԳՈ-1099 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն առաջադրել է այն հայեցակարգային դիրքորոշումը, որ «... սահմանադրական դատարանն ընդունելով՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա **դատական ակտերի վերանայման պայմանի լիարժեք օրենսդրական կարգավորում**, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման **նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը**, որոնց օրենսդրորեն հստակեցումը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2011թ. հուլիսի 15-ի ՄԳՈ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է **փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը**»: Իսկ 2013թ. մայիսի 31-ի ՄԳՈ-1099 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «...նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերա-



նայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը** (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում»:

Բննարկվող դրույթի հետ կապված առկա է մեկ այլ խնդիր ևս: Գտնում ենք, որ օրենսդիրը, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4262-րդ հոդվածի 4-րդ ենթակետով ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների համար նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու լիազորություն սահմանելով, հետևողական մոտեցում չի ցուցաբերել և նշված կանոնակարգումն ամբողջական չի դարձրել, ինչի արդյունքում ամրագրված է միայն լիազորությունը, սակայն սահմանված իրավակարգավորման իրացման հետագա ընթացքը մնացել է անկատար՝ հանգեցնելով իրավական անորոշության: Մնան պարագայում առաջացել է օրենսդրական բաց, որի արդյունքում խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերության ամբողջական և բնականոն իրագործումը, օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու իրավական երաշխիքներ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՄԳՈ-864, ՄԳՈ-914, ՄԳՈ-1143 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ սահմանադրական դատարանի կողմից օրենքի բացի սահմանադրականության հարցի քն-

նության իրավական հնարավորության առնչությամբ: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 08.04.2014 թվականի ՄԳՈ-1143 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Վերոշարադրյալի համատեքստում գտնում ենք, որ առկա օրենսդրական բացը չի ապահովում ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրենց լիազորության իրացման, ինչպես նաև անձի կողմից խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնման հնարավորությունը: **Հետևաբար, էական ենք համարում ընդգծել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրենց լիազորության իրացման պայմանների և դրանց հետ կապակցված այլ իրավակարգավորումների հստակ, ամբողջական և համակարգված օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտությունը**: Նշվածի լույսի ներքո անհրաժեշտություն է առաջանում փաստել, որ, ի տարբերություն նոր հանգամանքի հետևանքով վարույթ հարուցելու իրավահարաբերությունների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրավական կարգավորման են ենթարկված նոր երևան եկած հանգամանքի հետևանքով վարույթի հարուցմանը և այդ վարույթի հարուցման հիման վրա դատախազի գործողություններին առնչվող իրավահարաբերությունները /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 426⁵ և 426⁶/:

2. Օրենսդիրը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրելով «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով» հոդվածը /426⁴/, իրավական կարգավորման է ենթարկել այն դեպքերը, երբ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայ-



վում են, ինչպես նաև կանոնակարգված են նոր հանգամանքների հետևանքով բողոք բերելու ժամկետի հետ կապված իրավահարաբերությունները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին», իսկ 426⁴-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից»: Օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունը հանգում է նրան, որ սահմանված է որոշակի ժամկետ՝ տվյալ դեպքում եռամսյա, որի ընթացքում է հնարավոր նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք ներկայացնելը: Միաժամանակ, հստակեցված է նաև այն ժամանակային պահը, որից սկսվելու է հոսել բողոք ներկայացնելու եռամսյա ժամկետը, այն է՝ երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ նոր հանգամանքների ի հայտ գալու մասին: Նման կարգավորումն իրավաչափ է և հետապնդում է արդարացի նպատակ՝ ապահովել նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար ներկայացվող բողոքի ներկայացման ողջամիտ և արդյունավետ ժամանակահատված՝ հստակեցված սկզբնահաշվարկով: Ինչ վերաբերում է օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 4-րդ մասին, ապա այն իր շարադրանքի մեջ ներառում է այն դեպքը, որի պայմաններում է միայն հնարավոր կիրառել 426⁴-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ երբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը /օրենսգրքի 426⁴-րդ հոդ-

վածի 1-ին մասի 2-րդ կետ/: Նման պարագայում նորմը եռամսյա ժամկետի հաշվարկի համար 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի ընդհանուր կարգավորումից հատուկ կարգավորում է սահմանում, որի հիման վրա եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից:

Նման իրավակարգավորման ազդեցությունը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության ու կենսունակության վրա գնահատելու, դրույթի բովանդակության իրավաչափությունը լիովին ընկալելու համար անհրաժեշտ ենք համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված դրույթը դիտարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի նպատակի և առաջին հոդվածին համապատասխան մասնակից պետությունների ստանձնած ընդհանուր պարտավորության և Եվրոպական դատարանի առաքելության ու գործառույթների համատեքստում՝ համադրելով այն ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության հետ: Արձանագրում ենք, որ օրենսգրքով ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռի կամ որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար սահմանվում է եռամսյա ժամկետ, սակայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ եռամսյա ժամկետի հաշվարկի սկսվելու պահով պայմանավորված՝ անձի իրավունքների պաշտպանության նպատակով դատարան դիմելը դժվար իրացնելի է դառնում: Այսպես, եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով **այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից**: Հաշվի առնելով, որ ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային



դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը օտարալեզու տարբերակով է, և նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն, ընդգծելով, որ օրենսգրքի 426⁸-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն. «Գատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժում է, եթե՝ դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և եթե դատարանին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը, ...», իսկ դատարանին նման հանգամանքը կարող է հայտնի լինել միայն այն դեպքում, երբ առկա է հայերեն պատշաճ թարգմանություն՝ գտնում ենք, որ դատարանի մատչելիության իրավունքի և խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որևէ հանգամանքից՝ տվյալ դեպքում օտարալեզու վճիռը կամ որոշումից: Օտարալեզու փաստաթղթի հանձնման պահից ժամկետի հաշվարկը սկսվելու հանգամանքը արդարադատությունը դարձնում է ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ, այն անձի վրա լրացուցիչ և չհիմնավորված ծանրաբեռնվածություն է դնում, ինչի հետևանքով հնարավոր է, որ չիրացվի նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը: Ենթա է, քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է եռամսյա ժամկետի խախտման դեպքում միջնորդության պարագայում այն վերականգնելու հնարավորություն, սակայն այդ հանգամանքը չի կարող ամբողջովին և երաշխավորված վերացնել այն իրավիճակը, որն առկա է վերոշարադրյալում: Գտնում ենք, որ նոր հանգամանքների հիմքով դատարան դիմելու անձի իրավունքների արդյունավետ

իրացումը արժևորում և ենթադրում է ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման **այնպիսի լիարժեք և ամբողջական օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի վճռով կամ որոշմամբ հիմնավորված՝ անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված խախտված իրավունքը:**

Վերը նշվածի համադրված վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների պատշաճ ապահովումը, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը կարող են երաշխավորված լինել միայն այն դեպքում, երբ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4264-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվի ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշման հայերեն պատշաճ թարգմանությունն այդ դատարան դիմած անձին հանձնելու պահից:**

Ամփոփելով մեր կողմից ներկայացված վերլուծությունը՝ գտնում ենք, որ վերոշարադրյալ հանգամանքները և դրանց հետ փոխկապակցված իրավակարգավորումները համակարգային օրենսդրական պատշաճ կանոնակարգման անհրաժեշտություն ունեն: Հետևաբար, այն վստահությունն ունենք, որ նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու հետ կապված իրավահարաբերությունների իրավական կանոնակարգման պահանջն ինքնանպատակ չէ, **և դրա նպատակն է ապահովել պետության պոզիտիվ պարտականության իրականացումը, քանզի պետությունն ինքը պետք է ապահովի խախտված սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի վերականգնումը՝ կատարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը:**